«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:*

Առարկան՝ *Կենսաբանություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Անահիտ Իսպիրյան*

Ուսումնական հաստատություն՝ *ք. Աբովյան թիվ 8 հիմնական դպրոց*

Երևան *2022*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մարդկության ամենամեծ տնտեսական սպառնալիքը բնությունն արժևորելու մեր անկարողությունն է: Լ.Մուրադյան

Թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը բխում է արդի հանրակրթության պահանջներից,ըստ որի շրջապատի մաքրությունը առողջության կարևոր նախապայմաններից մեկն է:

Սոցիալ-մշակութային և կրթական ներկայիս իրավիճակում հրատապ է դառնում էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմնախնդիրները, երբ բացառիկ կարևորություն են ձեռք բերում հասարակության կողմից մարդ-հասարակություն-բնություն գոյապահպանման փոխհարաբերության գիտակցումը և էկոլոգիական բնապահպանական հայեցակարգի մշակումը՝ որպես ոչ միայն սոցիալ - տնտեսական ,այլև էկոբարոյական հիմնախնդիր,որը ենթադրում է էկոլոգիական մշակույթի , նոր արժեքային կողմնորոշումների և հարաբերությունների ձևավորման անհրաժեշտություն:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը որպես մանկավարժական գործընթաց և հասարակության կայուն զարգացման անհրաժետություն՝ հիմնահարցերը քննարկել դասավանդվող բ ոլոր առարկանների դասաժամերին՝

ապահովելով սովորողների գիտակցված մասնակցություն բնապահպանությանը:

Սակայն չնայած էկոլոգիական կրթության և դաստիարակության տարբեր հիմնախնդիրների նվիրված բազմաթիվ հետազոտությունների, դեռևս լիովին չբացահայտված են մնում հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության ու դաստիարակության առանձնահատկությունները:Այդ պատճառով էլ արդիական ենք համարում թեմայի ուսումնասիրությունը:

Թեմայի նպատակն ու խնդիրները:Առարկայի դաստիարակչական և ուսումնական նպատակները փոխկապակցված են: Դրանք են՝

1.Հասկանալ գիտության զարգացման ազդեցությունը մարդկանց և շրջակա միջավայրի վրա, ունենալ պատասխանատու և խնայող վերաբերմունք մարդկային և բնական ռեսուսներին:

2.Զարգացնել անհրաժեշտ գաղափաներ,հմտություններ,սովորություններ,վարքագիծ:

3.Թեմայի դաստիարակչական նպատակներից է նաև սովորողների մեջ ձևավորել պատասխանատվություն ընդհանուր բարիքները տնօրինելու, փոփոխելու կամ խնայողաբար օգտագործելու հարցում:

4.Դաստիարակել պատասխանատու և գիտակից վերաբերմունք սեփական և ուրիշների առողջության ու անվտանգության հանդեպ:

5.Ձեռք բերել փորձառություններ շրջակա միջավայրի թափոնները տեսակավորելու հարցում:

6.Ուսումնասիրել ընդհանուր բնապահպանական աղտոտվածությունը, գտնելու ճիտ ուղիներ նվազեցնելու սեփական երկրի աղտոտվածության մակարդակը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ հարցերը՝

1.Որոնք են էկոլոգիական հիմնախնդրի առաջացման պատճառները և հետևանքները:

2.Որն է աշակերտների էկոլոգիական դաստիարակության նպատակը դպրոցում:

3.Էկոլոգիական կրթության դասավանդումը որքանով է օգնում աշակերտներին բնապահպանական գիտելիքները կիրառել առօրյայում:

Գլուխ 1.Էկոլոգիա գիտություն,էկոլոգիական հիմնախնդիրների առաջացման պատճառները և հետևանքները:

Էկոլոգիան / հունարեն՝ օյկոս ապրելավայր և լոգոս գիտություն / գիտություն է կենդանի օրգանիզմների փոխադարձ կապի և միջավայրի պայմանների փոխհարաբերությունների մասին : Էկոլոգիա տերմինը առաջադրել է գերմանացի գիտնական Էրնստ Հեկկելը 1866-1869 թթ.:

Հազարամյակներ շարունակ մարդը՝ որպես կենսաբանական տեսակ ,իր կենսագործունեությամբ շրջակա միջավայրի վրա ազդում էր այնպես,ինչպես մյուս կենդանի օրգանիզմները: Մարդը սկզբում ներդաշնակորեն կապված էր կենդանի և անկենդան համակարգերի հետ: Իրավիճակը միանգամից փոխվեց մարդկային հասարակության զարգացումից հետո: Հասարակության զարգացման զուգընթաց մեծանում է մարդու ներգործությունը բնական միջավայրի վրա:Դա թողնում է իր բացասական հետևանքները,որոնք ժամանակի ընթացքում վերածվում են էկոլոգիական հիմնախնդիրների:

Էկոլոգիական հիմնախնդիրները բազմաթիվ են , սակայն առանձնացվում են դրանց խումբ,որոնք պահանջում են հրատապ լուծում և ամբողջ աշխարհի մարդկանց համատեղ ջանքեր:Այլ կերպ դրանց անվանում ենք համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրներ,որոնք ունեն իրենց առաջացման պատճառները:

Էկոլոգիական հիմնախնդիրների ուսուցման գործընթացում կկարևորենք գիտելիքների պաշարը,ներառարկայական և միջառարկայական կապերի ստեղծումը մյուս բնագիտական առարկաների հետ,ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառելու հմտությունների և կարողությունների դրսևորումը և օգտագործումը գործնականում:

Բնապահպանական հարցերի քննարկման ժամանակ աշակերտները հստակորեն պետք է պատկերացնեն,որ շրջակա միջավայրի պահպանության հիմնա խնդիրն անհնար է լուծել միայն ժամանակակից բնագիտության ,տեխնիկայի և տեխնոլոգիայի ձեռքբերումների շնորհիվ:

Ուսումնական առարկաների և էկոլոգիայի կապն իրականացվում է տվյալ առարկայի բովանդակության մեջ էկոլոգիական տարրերի գաղափարների, սկզբունքների հասկացությունների,մոտեցումների ներդրմամբ՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները,ինչպես նաև առարկայի բնույթը:

Էկոլոգիան սերտորեն կապված է այնպիսի առարկաների հետ , ինչպիսիք են՝ քիմիան ,աշխարհագրությունը,ֆիզիկան, մաթեմատիկան և այլն:

Մարդու ազդեցությունը գերազանցում է բնական միջավայրի ինքնավերականգնման ու ինքնամաքրման կարողությանը:Կենսոլորտում ու մարդոլորտում խախտվում է բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: Բնական միջավայրի ներկայիս վաթարացման հիմնական և առավել վտանգավոր պատճառը մարդածին աղտոտումն է : Գծապատկերում ներկայացված է բնական միջավայրի աղտոտման տեսակները և աղտորոշիչները:



Բնական միջավայրի աղտոտման հետևանքով խախտվում է միջավայրի ֆիզիկական, քիմիական և կեսաբանական բաղադրիչների հավասարակշռությունը որոնց հետևանքով առաջ են գալիս մարդկության համար վտանգավոր էկոլոգիական հիմնախնդիրներ:

Էկոլոգիական հիմնախնդիրների առաջացման պատճառներից են՝

.Երկրագնդի մթնոլորտի աղտոտումը և օզոնի շերտի քայքայումը.

Արդյունաբերության ,ջերմաէլեկտրակայանների,տրանսպորտային միջոցների արտանետումները,կենցաղային աղբի և այլ օրգանական նյութերի հսկայական զանդվածների փտումից առաջացած գազերը աղտոտում են երկրի օդային ավազանը:

Արտանետվող վնասակար նյութերը ,մթնոլորտում կուտակվելով փոխում են մթնոլորտային օդի բաղադրությունը և պատճառ են դառնում նոր համամոլորակային էկոլոգիական հիմնախնդիրների:

.Երկրագնդի անտառազրկումը. Այս էկոլոգիական հիմնախնդիրը կարող է և տեղային, և տարածաշրջանային, և համամոլորակային նշանակություն ունենալ:

Անտառ էկոհամակրգը բույսերի և կենդանիների զգալի մասի համար ապրելավայր է և նրա ոչնչացումը կհանգեցնի դրանց անդառնալի կորստին:Չլինեն անտառները ՝թթվածինը մթնոլորտում արագ կսպառվի,քանի որ այն անհրաժեշտ է ինչպես կենդանի օրգանիզմների կենսագործունեության համա,այնպես էլ տնտեսության բոլոր ոլորտներում:

.Հողերի վատթարացումը ,էրոզիան և անապատացումը.Էրոզիան հողի վերին շերտի քայքայման,հողմահարման կամ ,ջրի հոսանքով լվացման , հեռացման գործընթացն է:Հողի բնական էրոզիան ընթանում է խիստ դանդաղ ,մինչդեռ մարդու գործունեությունը զգալիորեն արագացնում է այն:Անապատացման պատճառներն են հողերի էրոզիան ,վատթարացումը,անտառազրկումը:

.Համաշխարային օվկիանոսի աղտոտումը և քաղցրահամ ջրերի որակի վատացումը.Համաշխարհային օվկիանոսը երկրագնդի կլիմայաձևավորման կարևոր գործոն է, մայրցամաքների միջև հաղորդակցության ուղի:Տագնապ է հարուցում այն փաստը, որ ավելի ու ավելի հաճախ է համաշխարհային օվկիանոսը օգտագործվում որպես աղբավայր: Առանց որևէ վերահսկողության թունավոր նյութերով տարողությունները թափվում են օվկիանոսի համեմատաբար մեծ խորություն ունեցող տարողության վայրեր:

Ինտերակտիվ մեթոդով աշակերտների հետ կքննարկենք բնական միջավայրի աղտոտման տեսակները և աղտորոշիչները,դրանք կկապենք էկոլոգիական հիմնախնդիրների առաջացման հետ:

Պայքարի եղանակները.

.Երկրագնդի մթնոլորտի աղտոտումը և օզոնի շերտի քայքայումը.

Անհրաժեշտ է պայքարել մթնոլորտի ստորին շերտերում օզոնով օդի աղտոտման դեմ և միջոցներ ձեռնարկել ստրատոսֆերայում օզոնի պահպանման ուղությամբ:

.Երկրագնդի անտառազրկումը.

Որպեսզի անտառները պահպանվեն առաջարկվում է մշակել տարբեր մոտեցումներ.

1.Պահպանել հակահրդեհային կանոնները,

2.Վերականգնել հատված անտառները,

3.Մեծացնել հսկողությունը արգելավայրերում,

4.Կանխել ծառահատումները վառելանյութի նպատակով:

.Հողերի վատթարացումը ,էրոզիան և անապատացումը.

Կախված ոչնչացման աստիճանից, կարելի է առանձնացնել հողի էրոզիայի երկու տեսակ՝նորմալ-էրոզիա բնական և արագացված ,այսինքն՝մարդածին :Էրոզիայի առաջին տեսակը տեղի է ունենում դանդաղ և ոչ մի կերպ չի ազդում հողի բերիության վրա:Արագացված էրոզիան սերտորեն կապված է մարդու տնտեսական աշխատանքի հետ:Ավելի հեշտ է կանխել էրոզիան ,քան հետագայում պայքարել դրա դեմ:Անապատացման կարող են բերել լանդշաֆտների ,լեռնային արդյունաբերության թափոնների և հոսքաջրերի ազդեցությունը:**Պայքարի տարբերակներ՝**

Ագրոանտառաբարելավումը,առաջավոր ագրոտեխնիկան ,հողերի վերակուլտիվացումը,արհեստական ոռոգումը,քարամաքրումը,գերխոնավ հողերի ցամաքեցումը:Պետք է գիտակցել ,որ մարդկության ներկայի և ապագայի համար շատ կարևոր է երկրագնդի հողային ֆոնդի պահպանումը:

.Համաշխարային օվկիանոսի աղտոտումը և քաղցրահամ ջրերի որակի վատացումը.

Որպեսզի սերունդները ապահովված լինեն ջրային ռեսուսներով կարևոր է՝

1.Ջրի խնայողաբար օգտագործում,որը հատկապես կարևոր է ոռոգման և բնակչության ջրամատակարարման համար:Ջրի խնայողաբար օգտագործման է ուղված ջրի հաշվառման և վճարման համակարգը:

2.Արդյունաբերական ,տեխնոլոգիական գործընթացների կատարելագործումը , որը ենթադրում է արդյունաբերության նորագույն տեխնոլոգիաներով հագեցվածություն:

Արտադրությունն առաջի հերթին պետք է լինի անթափոն և քիչ ջրատար:

Ջրային ռեսուսների պահպանության կարևոր ուղղություններից է արտադրական ձեռնարկություններում ջրի օգտագործման փակ բ շրջանառության համակարգի ներդրումը:

Դրա էությունն այն է ,որ օգտագործումից աղտոտված ջուրը մաքրում ,սառեցնում և նորից դնում են շրջանառության մեջ՝ կրկնակի օգտագործման համար:

Գլուխ 2.Աշակերտների էկոլեգիական դաստիարակության նպատակը դպրոցում:

Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը բազմակողմանի մի գործընթաց է ,որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն բնապահպանական այլ նաև աշխարհաճանաչողական ,բարոյահոգեբանական ,քաղաքական և շատ այլ նկատառումներ,որի հիմնական նպատակը սովորողների մեջ բնության նկատմամբ մշտական խնամքի անհրաժեշտության գիտակցումն է :Հասարակության վերակառուցումը ,նոր տնտեսական հարաբերություններն այսօր իրենց պահանջներն են առաջադնում ժամանակակից դպրոցին, և արդի մանկավարժական նոր խնդիրների թվին ավելանում է դպրոցականների `բնության նկատմամբ պարտքի ու պատասխանատվության զգացման ,իրավ ունքի և վերաբերմունքի ձևավորման ու զգացման ,իրավունքի և վերաբերմունքի ձևավորման ու զարգացման խնդիրները,որոնց լուծումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ ու սունբյեկտիվ գործոններով:Բնության ,նրա օրենքների ճանաչողությունը, նրա դաստիարակչական դերի բարձրացումը հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափություններից մեկն է:Այդ օրինաչափությունները պայմանավորված են հասարակական նշանակության պատճառներով:

Պատմական զարգացման այս փուլում կարևորվում է նաև սոցիալական խնդիրների`որպես սուբյեկտիվ գործոնի դերը:Բնության պահպանումը դարձել է հասարակական արտադրության նպատակ, և սոցիալ - տնտեսական զարգացման հիմնական ուղություններից մեկ,սակայն կա այս գործընթացը կանխող մի հանգամանք ,որը երկար ժամանակ անտեսվել է՝ բնաճաչողությունն է,շրջապատող կենսոլորտի օրինաչափությունների և օրենքների իմացությունը:

Անշուշտ կենդանի բնության կորուստներն ավելի քիչ կլինեն ,եթե մարդը լավ ճանաչեր բնությունը և այդ գիտելիքների հիման վրա կազմակերպեր իր գործունեությունը:Անհրաժեշտ է իմանալ բնության օրինաչափությունները,նրա հավասարակշռության մանրամասները,սնման բարդ շղթան և նրա առանձին օղակների կապն ու պայմանավորվածությունը,ինչպես նաև մարդու գործունեության դերն ընդհանուր համակարգում:Այդ պայմանով մարդն վաղ մանկական տարիքից պետք է ստանա էկոլոգիական կրթություն և դաստիարակություն:Էկոլոգիական խորը գիտելիքները կօգնեն հասարակությանը խուսափելու խորը ճգնաժամերից ու աղետներից,որոնց առկայությունը մարդկությունը արդեն գիտակցում է:

Ներկա փուլում վճռորոշ նշանակություն է ձեռք բերել նաև աճող սերնդի բնաճանաչողական ,բնապահպանական ընդունակությունների,կարողությունների և հմտությունների ձևավորումը:Դա հնարավորություն կտա հասնել այն բանին,որ դպրոցականներին մտահոգեն ու անհնգստացնեն էկոլոգիական համամարդկային հիմնահարցերը, նրանց մեջ պատասխանատվության զգացում առաջացնեն շրջակա միջավայրի նկատմամբ և մղեն կոնկրետ գործողության:Աճող սերնդի էկոլոգիական կրթության և դաստիարակության հիմքի վրա ձևավորվող էկոլոգիական կուլտուրայի բովանդակությունը պետք է կազմեն հարգանքը կենդանի բնության օրենքների նկատմամբ և դրանց հաշվառումը ,բնության մեջ համապատասխան վարքագծի դրսևորումն ու տնտեսական գործունեության կազմակերպումը: Այլ կերպ ասած, էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը հասարակության ապագա անդամների համար ունի աշխարհայացքային նշանակություն:

Այսօր մեզ խիստ անհրաժեշտ է վերադառնալ հայ դպրոցի բնապահպանական, բնադաստիարակչական ակունքներին և լրջորեն զբաղվել դպրոցականների էկոլոգիական դաստիարակությամբ,որովհետև մեզ մոտ ավելի,քան մեկ ուրիշ երկրում,զգացվում է դրա կարիքը:Այն պետք է սկսել նախադպրոցական տարիքից,դաստիարակել էկոլոգիապես,գրագետ և կրթված քաղաքացիներ:

Էկոլոգիական կրթությունը տարրական կրթության համակարգում կրում է ուսուցողական, հիմնական դպրոցում՝ վերլուծական ,իսկ ապագա դպրոցում՝պրոբլեմային մակարդակ:

Հայաստանի Հանրապետության էկոլոգիական անընդմեջ կրթության օրենքի նպատակն է՝

ա/ ապահովել մարդու և հասարակության անընդմեջ ,համալիրի ,միասնական էկոլոգիական գիտելիքների մատուցումը:

բ/ նպաստել էկոլոգիական դաստիարակության և մշակույթի ձևավորմանը,մարդու, հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակեցմանը, էկոլոգիապես գրագետ անձի ձևավորմանը:

Էկոլոգիական կրթության դաստիարակության այս ճգնաժամից դուրս գալու ուղիներից մեկը մարդկային կյանքի բոլոր բնագավառների վերակառուցումն է,

ճանաչիր-պահպանիր-գնահատիր բանաձևի ներդրումն է :

Դրան հասնելու համար կան մի քանիի սկզբունքներ.

1.Շրջակա միջավայրը կարողանալ դիտել որպես մեկ միասնական համակարգ:

2.Կիրառել անընդհատության սկզբունքը ,որպես նախակրթարանից մինչև՝ ծնողական համայնք օգտագործելով բոլոր տարիքային խմբերը:

Անընդհատության սկզբունքը կիրառել բոլոր առարկաների , ծրագրերի էկոլոգիացման համար,որը այսօր ունի տարերային, չհամակարգված, կծկտուր բնույթ:

3.Աշխատանքի հիմքում դնել տարածքային և գլոբալ սկզբունքային մոտեցումները, և աշակերտներին ներգրավել գործնական աշխատանքների գործունեության մեջ:

Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը այսօր հնարավոր է միայն,եթե հանրակրթական դպրոցում դասավանդող բոլոր առարկաների բովան դակությունը կհամապատասխանի համամարդկային և էկոլոգիական արժեքների պահպանմանը և զարգացմանը:

4.Բազմառարկայական մոդելի ստեղծումը, որը կինտեգրի բնագիտական առարկաները, ստեղծելով բնության ու մարդկային հասարակության կայուն զարգացման ամբողջական պատկեր , որը այսօրվա բնագիտության դասագրքերը չեն ապահովում:Առողջ ապրելակերպ առարկան դարձնել ամենակարևոր առարկաներից մեկը՝ սկսած տարրական հիգիենիկ կանոնների պահպանման անհրաժեշտության ուսուցումից մինչև ավելի սկզբունքային դաստիարակչական հարցերի վերլուծություն:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության սկզբունքները երեքն են.

1.Համալիրություն / ներառում են մասնգիտական ուսուցումը,գաղափարքաղաքական, գիտահետազոտական ու հասարակական աշխատանքներ, զանգվածային տեղեկատվական միջոցները,ստեղծագործական միությունները / :

2.Անընդմեջության / ամբողջ գործընթացն իրականացվում է որոշակի հաջորդականությամբ ու հետևողականությամբ / :

3.Համակողմանիություն / ամենատարբեր մասնագետների ,անձանց մասնակցության ապահովում՝ տարիքից,սեռից,սոցիալական խմբից անկախ / :

Միջին և հանրակրթական բարձր դասարաններում էկոլոգիական կրթության և դաստիարակության նկատմամբ պահանջն ավելի է խորանում:

Ինքս աշակերտների էկոլոգիական դաստիարակությանը նպաստելու համար դպրոցում կազմակերպում և իրականացնում եմ լաբորատոր-գործնական պարապմունքներ, էքսկուրսիաներ և արշավներ,որոնց ընթացքում աշակերտին ոչ միայն դիտողի ,այլև բացահայտողի դեր է ընձեռնվում, կարողանում է գնահատել

մարդու ազդեցության հետևանքները շրջակա միջավայրի վրա և համապատասխան եզրակացություն անել:

Էկոլոգիական կրթությունը անիմաստ է առնց բնության աշխարհում անցկացվող էքսկուրսիաների:

Էկոլոգիական էքսկուրսիան էկոլոգիական կրթության ձև է ,որն իրենից ներկայացնում է խմբակային այցելություն դեպի բնական կոմպլեքսներ կամ կուլտուրայի հաստատություններ կրթության նպատակով:

Էքսկուրսիայի ընթացքում սովորողները սովորում կողմնորոշվել տեղանքում,հետազոտել բնության աշխարհը ,առանձնացնել հակադրություններ:Այստեղ ձևավորվում է պատկերացումների համակարգ բնական համակեցությունների մասին:

Էքսկուրսիան թույլ է տալիս ամբողջությամբ բացահայտել բնության աշխարհի էսթեթիկական և ճանաչողական պոտենցիալը,ձևավորել սուբյեկտիվ ոչ պրագմատիկ վերաբերմունք բնության նկատմամբ,յուրացնել մի շարք բնապահպանական տեխնոլոգիաներ, և գլխավորը բնական միջավայրում անհատական վարքագծի ռազմավարություն:

Հաճախ անցկացնել շաբաթօրյակներ,հատկապես գարնանը իրականացնել ծառատունկ, խնամել և հետևել , որ տնկած ծառերը չչորանան:

Այսպիսով աշակերտները անձամբ ուսումնասիրելով իրենց համայնքի էկոլոգիական խնդիրները առավել հստակ են գիտակցում բնության պահպանման անհրաժեշտությունը,խորը գիտակցում խնդրի կարևորությունը:

Բացի այդ,նրանք են առաջարկում եղանակներ համայնքի էկոլոգիական վիճակը բարելավելու և առավել մաքուր շրջակա միջավայրում ապրելու համար:Այս պարագայում արդեն իսկ աշակերտները ունենալով կայուն գիտելիքներ հետագայում ևս կարժևորեն շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի բարելավման անհրաժեշտությունը և կնպաստեն բնության պահպանմանը այլ ոչ հակառակը:

2.1 Էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են՝ ա/ դպրոցականների կողմից այն առաջատար գաղափարների և հիմնական հասկացությունների ու գիտելիքների յուրացումը,որոնց վրա բնության օրենքներին համապատասխան որոշակիացվում է մարդու ներգործությունը բնության վրա՝բնության սոցիալ-տնտեսական , առողջարահիգենիկ և հոգևոր գեղագիտական արժեքների իմացությունը ,գ/ սովորողների բնաճանաչողական ընդունակությունների ,

բնապահպանական կարողությունների և հմտությունների կարողությունը և զարգացումը, բնական միջավայրի ստեղծագործական վերափոխման ունակությունների մշակումը , բնապահպանական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը,բնական միջավայրի ստեղծագործական վերափոխման ունակությունների մշակումը,բնապահպանակն գաղափարների քարոզչությունը, վարքի նորմանների պահպանումը:

Էկոլոգիական դաստիարակության գործում շատ մեծ է մարդու էկոլոգիայի ուսումնասիրությունը ,որը սովորողների մոտ կսերմանի մարդկային հարաբերություններում վարվեցողության ,ֆիզիկական մտածողության և հոգեվիճակի ծանրաբեռնվածության դերը մարդու առողջ կենսակերպում:

Էկոլոգիական կրթության խնդիրներն են՝

Դաստիարակել՝

.Անձի էկոլոգիական մշակույթ՝ ուղղված սեփական կյանքի պահպանմանը՝ զուգակցելով կենցաղային պահանջմունքները մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների համապատասխան:

.Մարդ-բնություն փոխազդեցության մշակույթ՝ հաշվի առնելով բնական միջավայրի տարողունակության ներուժը ,բնության մեջ անձի պահվածքի վարքագծի արմատավորում:

.Բնության տարրերի օգտագործման աշխատանքի մշակույթ:

.Քաղաքացիական պատասխանատվություն բնության վիճակի և հասարակական կայուն զարգացման համար:

.Մասնագիտական էկոլոգիական գիտակցումը և քաղաքացիական պատասխանատվությունը մասնագիտական գործունեության ազդեցության ու հետևանքների համար:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են՝

.Բնության բազմակողմանի արժեքների գիտակցում՝ որպես հասարակության հոգևոր և նյութական ուժի աղբյուրի,

.Շրջակա միջավայրի վիճակի գնահատման ընդունակության ձևավորման և նրա բարելավման ճիշտ որոշման ընդունում,իր գործողությունների հնարավոր հետևանքների կանխատեսում՝ իր ողջ գործունեության ընթացքում բացառելով բնության վրա բացասական ազդեցությունը:

.Բնության մեջ վարվելակերպի նորմերի գիտակցված պահպանում՝ թույլ չտալով բնական միջավայրի աղտոտում կամ ավերում:

.Բնության բարեկարգող և վերափոխիչ գործունեության ակտիվացում և անհանդուրժողականություն ցուցաբերում այն մարդկանց գործողությունների նկատմամբ,որոնք,վնաս են հասցնում բնությանը և բնության պահպանությանը քարոզչություն:

Գլուխ 3 Էկոլոգիական կրթության առանձնահատկությունները տարրական դպրոցում

Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական կրթության գերակա խնդիրներից է:Վաղ տարիքը երեխայի ճանաչողական ունակությունների ձևավորման ամենանպաստավոր շրջանն է:Ուստի երեխայի էկոլոգիական դաստիարակությունն անհրաժեշտ է սկսել վաղ տարիքից՝նրա մանկապարտեզ սկսվելու տարիքից՝ նրա մանկապարտեզ ընդունվելու պահից:Կրտսեր նախադպրոցական տարիքի երեխայի էկոլոգիական դաստիարակությունը նպատակը բնության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորումն է:

Իսկ դաստիարակի խնդիրը երեխայի մեջ վաղ տարիքից բնության և շրջակա միջավայրի նկատմամբ նախնական պատկերացումներ ձևավորելն է :Անհրաժեշտ է դեռևս այդ շրջանից երեխային սովորեցնել,որ կենդանիները և բույսերը շնչավորներ են:Նրանք շնչում են ջուր խմում և ,որ ամենակարևորը,վնասվելիս ցավ են ցգում այնպես,ինչպես մարդիկ:Ծառի կոտրված ճյուղը կամ ծաղկի վնասված ցողունը լաց է լինում և օգնություն խնդրում:Փոքրիկները ընկալելով ամեն ինչ՝կարեկցանքի զգացում են ապրում,ինչը նրանց կարող է ուղեկցել ամբողջ կյանքի ընթացքում:Բնության և շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման և ճիշտ դրսևորման լավագույն միջոցը խաղն է:Եթե այն երեխայի մեջ դրական հույզեր առաջացնի ,ապա նա կընկալի և կհասկանա դաստիարակի խոսքը:Դա էլ կապահովի էկոլոգիական դաստիարակության արդյունավետությունը: Վաղ տարիքից երեխային հարկավոր է սովորեցնել ջրել խմբասենյակի ծաղիկները:Այդ կերպ նա փորձով է համոզվում,որ ծաղիկների աճման համար հարկավոր է ջուր և խնամք:

Թռչուններին կերակրելով նա հասկանում է ,որ նրանց անհրաժեշտ է ցորենի հատիկներ,ջոր,ձկնիկներին ՝ կեր և այլն:Վաղ և կրտսեր նախադպրոցականի տարիքային առանձնահատկությոուններից ելնելով՝դաստիարակն էկոլոգիական դաստիարակության գործընթացն իրականացնում է՝առաջնորդվելով << Երեխայի աշխարհընկալումը ձևավորվում է տեսնելով >> նշանաբանով :

Խմբասենյակում հարկավոր է ստեղծել համապատասխան միջավայր. ստվարաթղթից պատրաստել տարվա տարբեր եղանակներին բնորոշ ծառերի մանրակերտեր / ապահովելով տերևների և ծառերի վրա աճող մրգեր

տեղադրելու և հանելու հնարավորությունը /, ծաղկամաններով ծանոթ ծաղկատեսակներ, թռչունների վանդակներ, ձկների ակվարիումներ և այլն:

Դաստիարակը գեղեցիկ երաժշտության ներքո ,երեխաների հետ շրջում է խմբասենյակում տեղադրված բնության անկյուններում / ելնելով օրվա նախատեսված թեմայի բովանդկությունից / և նրանց սովորեցնում , թե ինչպես կարելի է շփվել բնության ամենաբազմազան բնակիչների հետ,հետաքրքրվել նրանց որպիսությամբ և ճիշտ վերաբերմունք դրսևորում նրանց նկատմամբ:Այնուհետև երեխաների ուշադրությունը հրավիրում է դիտարկվող օբյեկտի արտաքին տեսքի և առանձնահատկությունների վրա:Այս ընթացքում հարկավոր է մշտապես ուշադրության կենտրոնում պահել գեղեցիկը տեսնելու,զգալու և դրանով զմայլվելու ունակության ձևավորումը: Այսպիսի պարապմունքների հիմքում դրվելու են երեխայի բարոյահոգեբանական վարքագծի՝սիրելու, հիանալու,ուրախանալու,չնեղացնելու սկզբունքի,օգնելու պատրաստակամության նախադրյալները:Մինչև այցելություն բնության կամ կենդանկան անկյուն՝ դաստիարակը երեխաներին տրամադրում է, որպեսզի նրանք դիտարկվող օբյեկտին հանդիպելիս բայրցկամ ժպտան, և հարգալից վերաբերվեն: Նմանատիպ պարապմունքների կազմակերպումը և երեխաների նախնական տրամադրվածության ապահովումը կարևոր նախապայման է՝ երեխաների դրական հույզերի առաջացման և էկոլոգիական մտածելակերպի ձևավորման համար:

3.1Էկոլոգիական դաստիարակության առանձնահատկությունը միջին դասարաններում

Էկոլոգիական կրթությունը որոշակի արժեքների և հասկացությունների յուրացման անընդհատ գործընթաց է,որն ուղղված է շրջակա միջավայրի ու մարդկանց միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորմանը: Այն օգնում է շրջակա միջավայրում դրսևորելու էկոլոգիական ճիշտ վարքագիծ: Էկոլոգիական կրթությունը հնարավոր չէ իրականացնել առանց կենսաբանության իմացության ,քանի որ էկոհամակարգային կամ կենսաերկրացենոզային մակարդակը կենդանի կազմավորման մակարդակներից մեկն է :

Էկոլոգիան ուսումնասիրելու անհրաժեշտությամբ է բացատրվում էկոլոգիական դստիրակության և կրթության դերը:

Բնության նկատմամբ մարդու մեջ պատասխանատու վերաբերմունքի դաստիարակումը ընդհանուր կրթության կարևոր նպատակն է,իսկ բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը՝ անձի բնութագիրը:Դա առաջին հերթին նշանակում է՝ բնության օրենքների իմացություն,որով անձի ձևավորման ընթացքում պայմանավորվում է նրա մտածողական ,հուզական և կամային ոլորտները:Բնության նկատմամբ՝որպես բազմաբովանդակ արժեքի,

վերաբերմունքի,բարոյական իմաստը առաջին հերթին, ապագա սերունդների մասին հոգսն է:Հիմնական նպատակից բխող այս խնդիրները , որոնք պետք է լուծի դպրոցը,կազմակերպելով սովորողների էկոլոգիական դաստիարակությունը, կրում են կրթադաստիարակչական և զարգացնող բնույթ:

Քանի որ բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի դաստիարակումը հենվում է ոչ թե առանձին առարկայի հասկացությունների ու գաղափարների վրա,այլ բարձր աստիճանի գիտելիքների համակարգի, որը կրում է միջառարկայական բնույթ,բնական,հասարակական և տեխնիկական գիտությունների ինտեգրատիվ կապերն առավել լիարժեք դրսևորվում են՝սոցիալական էկոլոգիայի , մարդու էկոլոգիայի,կոմպլեքսային էկոլոգիայի գաղափարներում: Յուրքանչյուր ուսուցիչ պետք է պատկերացում ունենա ուսումնական ծրագրերի էկոլոգիական պոտենցիալի մասին: Դաս առկա է հայ գրականության, աշխարհագրության,կենսաբանության,քիմիայի,ֆիզիկայի առարկայական ծրագրերում: Այն ավելի ընդգրկուն բնույթ է կրում միջին դասարանների կենսաբանական առարկանների բովանդակության մեջ,որտեղ եղած էկոլոգիական խնդիրները հանդես են գալիս , որպես գիտելիքների հատուկ ձև,սոցիալական նոր իրականություն:

Էկոլոգիական կրթության ու դաստիարակության վերաբերյալ միջին դասարաններում ուսուցանվող առարկանների հիմքի վրա ձևավորվում են առաջատար գաղափարներ և հասկացություններ:Այսպես տարբեր առարկաններից ստացած փաստացի գիտելիքների կուտակման հիման վրա՝ երեխաները գաղափար են կազմում այն մասին,որ բնությունը միջավայր է և մարդու կյանքի համաար անհրաժեշտ պայման:

Միջին դասարաններում էկոլոգիական դաստիարակության կարևոր գաղափարը բնության ամբողջականության գաղափարն է: Բնության մեջ գործող կապերի իմացությունը կարևոր է որպես ճիշտ աշխարհըմբռնում: Սննդային շղթաների բարդ փոխհարաբերությունները, կենդանիների հարմարվելը կոնկրետ բնական միջավայրին, և սեզոնային ռիթմերին, մարդու ազդեցությունը բույսերի և կենդանիների վրա հանդիսանում են հետաքրքրություն առաջացնող գործոններ,որոնք ստիպում են աշակերտներին սովորել և ուսումնասիրել բնական փոխհարաբերությունների բնույթը՝գործնական կյանքում օգտագործելու համար:

Շատ անհրաժեշտ էկոլոգիական դաստիարակության հայրենասիրական կողմի ապահովումը: Այսպես,օրինակ, յուրաքանչյուր առարկայի ուսումնասիրման ժամանկ պետք է հետևողականորեն գաղափար տալ այն մասին, որ պահպանել բնությունը նշանակում է պհպանել հայրենիքը:Յուրաքանչյուր մարդու համար հայրենիքի գաղափարը կապված է հայրենի բնության հետ: Հայրենի բնաշխարհի

պատկերները , որոնց մանկուց ծանոթ են մարդուն,որոնց մասին նա բանաստեղծություններ է սովորել դեռևս մանկապարտեզում, ձուլվում են միմյանց մեջ, և հարազատ երկրի նկատմամբ ունեցած պատասխանատվության զգացմունքը նույնանում է նրա՝բնության պահպանության նկտմամբ ունեցած պատասխանատվության զգացումի հետ:

<< Ինչ է բնությունը >> դասի մեջ աշակերտներին պետք է հասկացնել, որ բնությունը մեզ շրջապատող աշխարհն է՝ իր կենդանիներով ու բույսերով,որոնց կյանքը պայմանավորված է միմյանցով և կապված է անկենդան բնության հետ:

Այս բոլորն առաջացնում են բնության ամբողջականության գաղափար՝ ամենակարևորը խոսում են այն մասին, որ մարդը բնության մի մասնիկն է, ու նրա կյանքը կապված է հողի, օդի , ջրի գոյության հետ: Աշկերտների էկոլոգիական կրթության ու դաստիարկության կարևոր հսկացություններից մեկը հետևյալն է՝ << Մարդը կենսաբանակն էակ է և իր արմատներով կապված է բնության հետ>> :

Աշակերտներին մարդու առողջության ,հանգստի և աշխատանքի նորմալ սահմանների ծանոթացնելիս պետք է նշել, որ այս բոլորի համար անհրաժեշտ են նպաստավոր բնական պայմաններ, որոնք պետք է պահպանել ու լավացնել:

<< Բնության և շրջակա միջավայրի պահպանություն >> հաասկացությունը աշակերտների համար ունի ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն: Այս հասկացությունները բացատրելու համար ինչպես հայրենի բնության ,բնագիտության, կենսաբանության ,այնպես էլ մյուս առարկանների դասավանդման պետական ծրագրերում մեծ տեղ է տրվում:Բնության մեջ գտնվելու ժամանակ ճիշտ վարքագիծ դրսևորելու բարոյական նորմերի դաստիարակության հարցը աշակերտների համար բացահայտվում է աստիճանաբար , այն չափով,ինչ չափով , որ դա կապված է դասի թեմայի խնդիրների հետ:

Աշակերտներին հասկանալի դիտողական օրինակներով պետք է հասկացնել, թե բնության մեջ գտնվելու ժամանակ ինչ կարելի է և ինչ չի կարելի, այնպես ,որ չառաջանա անցանկալի հետևանքներ:

Միջին դասարաններում էկոլոգիական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է ուսուցիչների կողմից սովորողների առանձնահատկություններին լավատեղյակ լինելուց:

3.2 Էկոլոգիական կրթության դասավանդումը ,որքանով է օգնում աշակերտներին բնապահպանական գիտելիքները կիրառել առօրյայում:

Եթե մարդկությունը շարունակի ապրել այնպես, ինչպես հիմա է ապրում,ապա 2035 թվականին էներգիայի և այլ պաշարների նկատմամբ իր պահանջները բարելավելու համար, ստիպված կլինի որոնել երկիր մոլորակի նման ևս 1 մոլորակ: Մեր օրերում չափազանց կարևոր է՝ էկոլոգիական կրթության իրականացումը և օգտագործելով դպրոցների ներուժը երկիր մոլորակի կայունության նկատմամբ պատասխանատվության զգացում դաստիարակելու ուղությամբ:Այսօր անհրաժեշտ է փոխել մեր ապրելակերպը, աշխատառճը և հանգստի կազմակերպման ձևը: Կլիմայի տաքացման զուգահեռ գնալով պակասում են ձկնային պաշարները, ոչնչանում են անտառները ,նվազում է կենսաբազմազանությունը, և ակնհայտ է, որ մարդկությունը կանգնած է համաշխարհային էկոլոգիական ճգնաժամի առջև: Մինչդեռ մարդկությունը իրեն չի կարող իրեն թույլ տալ Երկրիր մոլորակի նկատմամբ պարտքի կուտակում:

Աշխատանքի նպատակն է դասընթացների միջոցով աշկերտների մոտ սերմանել այնպիսի արժեհամակարգներ , որոնց միջոցով կարող ենք զգալիորեն նվազեցնել մարդածին ճնշումները մեր մոլորակի վրա:Նպատակից բխող խնդիրներն են՝

1.Աշակերտների մոտ սերմանել **հասկացությունը**

2.Վերհանել և ներկայացնել **կենսակերպը**

3.Անհրաժեշտ գրականության ձեռքբերում և ուսումնասիրում

4.Գրական ակնարկ կենսակերպը երաշխիք է ստեղծում, որպեսզի բնության առատ հարստություններից օգտվի յուրաքանչյուր կենդանի էակ,ներառյալ վայրի բնությունը:

5.Կենսակերպի տեսլականը՝<<Հանուն այն մոլորակի որտեղ մարդիկ ամենուր կապրեն առողջ և երջանիկ կյանքով՝բնական պաշարների իրենց հասանելիք քանակի սահմաններում, և որտեղ վայրի բնությունն ապահովված կլինի իրենց անհրաժեշտ տարածքով>> :Բնության համաշխարհային հիմնադրամի՝ / WWF / նախաձեռնություններն օգնում են երկրների կառավարություններին, գործարարներին և սպառողներին՝որդեգրելու նոր և կայուն մոտեցում ապրելակերպի և աշխատառճի նկատմամբ :

Իսկ ինչ է էկոլոգիական ոտնահետքը :Մի նոր գիտություն է ,որը հնարավորություն է և հետևություն անել մեր կենսակերպի կայունացման մասին / կայուն է համարվում պաշարների այնպիսի օգտագործումը,որը չի գերազանցում դրա բնական վերարտադրության չափը /:

Ըստ վերջին տվյալների երկրագնդի վրա կենսաարգասաբեր / բիոպրոդուկտիվ /ցամաքային և ջրային տարածքը կազմում է 13,6 մլդ հեկտար,մինչդեռ ,մեր իրական էկոլոգիակն ոտնահետքերը համարժեք է 17,5 մլդ հեկտարի: Բերենք մի քանի օրինակ: Ձկնային պաշարների որսի ծավալը զգալիորեն գերազանցում է դրանց բնական վերարտադրման չափը:Յուրաքանչյուր մեկ տոննա որսված ձկնային պաշարի վերականգնման համար պահանջվում է 25հա ջրային տարածք:Սակայն զարգացող երկրներում միջինում 4հոգուց բաղկացած ընտանիքի կազմի ամեն տարի սպառվող ձկան քանակը վերարտադրելու համար պահանջվում է 3 ֆուտբոլի խաղադաշտի չափ տարածություն /մոտ 1,33 հա /:Այսօր աշխարհում գոյություն ունեցող պաշարների մեծ մասը գործնականում վերացել է:Չորս մարդու գործունեության հետևանքով ավելացել են CO2-ի արտանետումների տարական ոտնահետքերը համարժեք են 6 ֆուտբոլի խաղադաշտի տրածքի մոտ / 2,66 հա /:Այդ արտանետումների հետևանքով առաջացող կլիմայի փոփոխության արդյունքում ավելացել է բնական աղետների քանակը և դրանց ուժգնությունը:Այպիսով եկա այն եզրահանգման ,որ աշակերտների մեջ պետք է սերմանել սեր դեպի բնությունը,մարդկային կարևորագույն արժեքները՝ աշակերտներին ընդգրկելով մի շարք ծրագրերի ու միջոցառումների մեջ:Աշակերտների մոտ առաջին հերթին խորացնել գիտելիքները բնապահպանության ոլորտում և դրանք կիրառել առօրյայում:Դասերի ընթացքում աշակերտները բացի տեսական գիտելիքներից,սովորեցին թե ինչպես ռացիոնալ օգտագործել բնական ռեսուրսները,նպաստել դրանց կայուն կառավարմանը, կենցղում լինել առավել խնայող,ապրել առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու: Նախ աշակերտների հետ միասին պատրաստեցինք ստվարաթղթե աղբամաններ՝նախատեսված թղթի և պլաստիկե շշերի համար: Աշակերտները սկսեցին դասարաններում առանձնացնել թղթի թափոնն ու պլաստիկե շշերը:Այնուհետև նրանց ներգրավեցի աղբահավաքման գործընթացի մեջ: Դպրոցի տարածքի և շրջակա միջավայրի մաքրության մեջ ներգրավելով նկատեցի , որ նրանց մոտ ձևավորվեցին ,այնպիսի կարևոր արժեքներ,ինչպիսիք են մաքրությունը,ուշադրությունը միջավայրի նկատմամբ ,հոգատարությունն ու համախմբվածությունը: Այնուհետև պատրաստեցինք կերակրամաններ և այլընտրանքային տոնածառներ:Աշակերտների կողմից տարբեր նյութերից կերակրամաններ պատրաստելը նպաստեց,որ նրանք հոգ տանեն փոքրիկ բարեկամների՝ թռչունների մասին:Այն նաև օգնեց որ աշակերտները խորացնեն իրենց գիտելիքները Հայաստանում բնակվող թռչնատեսակների նրանց կազմվածքի և վարքագծի,կենսապայմանների և սովորույթների մասին:Իսկ այլընտրանքային տոնածառների պատրաստումը օգնեց նրանց գործի դնել իրենց ստեղծագործական միտքն ու վառ երևակայությունը:Երեխաները սկսեցին տիրապետել թափոնարվեստի հնարքներին:Դպրոցի բնական եղևնին փոխարինվեց

թափոններից պատրաստված տոնածառներով՝դրանով իսկ նպաստեցին Ամանորի նախօրեին ապօրինի ծառահատումների կրճատմանը:Դպրոցում իրականացնում ենք նկարչական մրցույթներ,որոնց նպատակն է երեխաներին ընդգրկել բնապահպանությանը ընդգրկված մեծ նկարչական մրցույթի շուրջ:Այն քաջալերում է երեխաներին իրենց ձայնը բարձրացնել հայրենի բնության պահպանության համար:Այն հնարավորություն է ընձեռնում յուրաքանչյուր երեխային նկարների միջոցով արտահայտել իր երազանքները, բնապահպանական մտահոգություններն ու մոտեցումները:Նաև իրականացրել ենք թղթի թափոնների հավաքում, տեսակավորում:Այնուհետև վերամշակման ենք հանձնում թղթի թափոնները:Առավել ակտիվ աշակերտները և դասարանները պարգևատրվում են խրախուսական պարգևներով:

Այսպիսով աշակերտները հասկացան, որ բնության համար թափոն համարվող տարբեր նյութերի՝պոլիէթիլեն,պլաստիկ շշեր,սկավառակներ և այլն կարող են պատրաստել զանազան իրեր:

Շատ կարևոր են նաև դաս-միջոցառումների դերը բնապահպանական գիտելիքները ամրապնդելու համար:Նախաձեռնեցի նաև թեմայով դաս-միջոցառում, որի ընթացքում աշակերտներին բաժանեցի դերեր,առաջադրվեցին խնդիրներ և վերջում փորձեցինք լուծումներ գտնել բարձրացվող հարցերի շուրջ:

Այսպիսով էկոլոգիական կրթության դասավանդումը օգնեց աշակերտներին ձեռք բերել բնապահպանական գիտելիքներ և դրանք հաջողությամբ կիրառել առօրյայում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

.Հաշվի առնելով բնության ներկայիս անմխիթար վիճակը ,որը պայմանավորված է մեծ չափով մարդկային գործոնով ,ես ուսումնասիրել եմ բնապահպանական մի շարք կարևոր խնդիրներ ու ամենից կարևոր թեման `<<Բնապահպանական կրթությունը ու դաստիարակությունը դպրոցում>>:Այս թեմայի ուսումնասիրման ժամանակ ինձ համար պարզ էր դարձել այն փաստը, որ սա նույնպես հասարակության գիտակցության մեջ մտցնելու առումով դժվարություններ է հարուցում:Դրա համար հարկ համարեցի հանգամանորեն ուսումնասիրել էկոհամակարգում առկա խնդիրները և գտնել արդյունավետ հնարներ ու միջոցներ այն ավելի մատչելի ու հասանելի դարձնելու համար:

Գտնում եմ ,որ դպրոցականների շրջանում մատչելիության լավագույն միջոցը տեսանելի գործիքների օգտագործումն է,տվյալ դեպքում՝հաճախակի շաբաթօրյակների մասնակցումը ,հին և անմխիթար վիճակում գտնվող իրերին նոր կյանք տալը:Դրանք հիմնական նյութը կդարձնեն յուրացման համար պարզ,մատուցումը՝տպավորիչ և կարծում եմ , որ կնպաստեն նաև հիշողության մեջ երկարատև մնալուն:Այլ կերպ ասած՝դրանց շնորհիվ կարելի է ապահովել մնայուն գիտելիքների փոխանցում և առկայություն:

.Բնապահպանական դաստիարակությունը պատասխանատվության դաստիարակումն է: Այն պետք է անցնի բնաճանաչողությունից դեպի բնասիրություն,ապա՝ բնապահպանություն:

.Էկոլոգիակաան հիմնախնդիրների և բնագիտական առարկաններից ստացած գիտելիքները հնարավորություն տվեց էլ ավելի ամրապնդելու էկոլոգիական գիտելիքները, ձևավորել էկոլոգիական մտածելակերպ և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:

Ակնհայտ է,որ մարդկային հասարակության կայուն զարգացումը հնարավոր է միայն համաշխարհային մասշտաբով:Անհնար է պահպանել բնությունը,ջրի ,հողի և մթնոլորտի մաքրությունը մեկ որոշոկի տարածաշրջանում:Հիշենք, որ կենսոլորտը՝միմյանց հետ փոխազդող երկիր մոլորակի բոլոր էկոհամակարգերի ամբողջությունն է:Դրանցից որևէ մեկում ցանկացած փոփոխություն առաջ է բերում մյուսներում ստեղծված հավասարակշռության խախտում:Մոլորակի ցանկացած բնակիչ պետք է ձգտի պահպանել իր շրջակա միջավայրի հարստությունը:

Գրականության ցանկ

1.Ասատրյան Լ.Թ.,Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները ,-Երևան.:

Արտագերս,2007,-335 էջ:

2. Ասատրյան Լ.Թ.,Հակոբյան Գ.Հ.,Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն,-Երևան.:Արտագերս,2011-179 էջ:

3.ՀՀ օրենքը էկոլոգիական դաստիարակության մասին.- Երևան .,2022:

4.Մ.Մ.Մանուկյան , արտադասարանական դաստիարակչական աշխատանքի առանձնահատկությունները, Երևան ,1980:

5.Է.Ղազարյան ,Ա.Թռչունյան ,Դ.Դանգուլյան ,Գ.Մելիքյան ,Ս.Մաիլյան <<Բնագիտություն>> 2019:

6.Վիքիպեդիա ազատ հանրագիտարան https://hi vikipedia.org/viki/